ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

Հայոց լեզվի և գրականության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ.

Արձանագրություն № __2__

«__12__» ___սեպտեմբեր___ 2023թ.

ՀԼԳ/բ-010 «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-2)»

ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝ 011401.00.6**-Մասնագիտական մանկավարժություն

**Կրթական ծրագիր՝** **011401.19.6**-Հայոց լեզու և գրականություն

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր

**Ամբիոն՝** Հայոց լեզվի և գրականության

**Ուսուցման ձևը՝** Առկա

**Կուրս/կիսամյակ** 3-րդ / 5-րդ

**Դասախոս՝** Արեն Սանթոյան

**Էլ. հասցե՝** arensantoyan@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    14.2. Հարցաշար
    14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

Ձևաբանությունը քերականության երկու բաժիններից մեկն է: Նրա դասավանդումը նպաստում է լեզվաբանական տրամաբանության զարգացմանը, խոսքի ճիշտ կառուցմանը, բառերի քերականական ձևերի ճշգրիտ ձևակերպմանը: Ձևաբանությունն իր առջև խնդիր է դնում ուսումնասիրելու քերականության այդ գիտակարգի առանձնահատկությունները, խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, ինչպես նաև յուրահատկություններն ու ընդհանրությունները:
«Ձևաբանություն-2» առարկան մասնագիտական դասընթաց է, որը ներառված է 011401.19.6 կրթական ծրագրի ուսումնական պլանում՝ «Ժամանակակից հայոց լեզու» կրթամասի բաժնում:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1. Դասընթացի նպատակն** է մասնագիտական հիմնարար գիտելիքների մատուցումը, ապագա ուսուցչին ձևաբանությանը վերաբերող տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով զինելը:

**2.2. Դասընթացի խնդիրներն են՝**

-ուսումնասիրել բայի քերականական կարգերը, խոսքիմասային բառակազմական, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները:

-ներկայացնել չթեքվող խոսքի մասերի (մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն, վերաբերական) անթեքականության պատճառները, խոսքիմասային առանձնահատկությունները:

**3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

Առարկան յուրացնելու համար ուսանողները պետք է ուսումնասիրած լինեն «Ընդհանուր լեզվաբանություն», «Հնչյունաբանություն», «Բառագիտություն»:

**4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և կոմպետենցիաները.**

**4.1. Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է.**

**Հասկանա՝**

• Խոսքի մասերի տարբերությունները, ինչպես նաև խոսքի մասերի և նախադասության անդամների տարբերությունները:

**Իմանա՝**

Խոսքի մասերի դասակարգման տեսությունները և հիմունքները: Խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները:

**Կարողանա՝**

Կատարել տեքստի ձևաբանական վերլուծություն, գտնել զուգաձևությունները, անկանոնությունները, սխալներն ու շեղումները:

**Տիրապետի՝**

Ձևաբանական վերլուծության մեթոդներին:

**4.2.** Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ կոմպետենցիաները.

**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
**ՄԶԿ1** քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
**ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
**ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
**ՈՒԿ4** առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները շրջանավարտը կարող է օգտագործել մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև գիտական հետազոտություններ կատարելու ժամանակ:

*6.* Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն | 4 կրեդիտ / 120 ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ |
|---|---|
| Դասախոսություն | 30 |
| Գործնական աշխատանք | 24 |
| Ինքնուրույն աշխատանք | 66 |
| **Ընդամենը** | 120 |
| Ստուգման ձևը՝ | Ընթացիկ քննություն /գրավոր կամ բանավոր/ |

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>.

- **<u>Դասախոսությունը</u>** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը:
- **<u>Գործնական պարապմունքները</u>** անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով:
- **<u>Ինքնուրույն աշխատանքը</u>** ուսանողների այն աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

- **<u>Ռեֆերատ</u>** – ուսանողների ինքնուրույն գրավոր աշխատանք, որում ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով

գրական աղբյուրների վրա (դասագրքեր, մենագրություններ և այլն):

- <u>**Զեկույց**</u> – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք, խմբային աշխատանք:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** թիմային քննարկում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| 1. | Բայ | 14 | | 12 | | 30 |
| 2. | Մակբայ | 4 | | 2 | | 8 |
| 3. | Կապ | 4 | | 4 | | 10 |
| 4. | Շաղկապ | 4 | | 2 | | 6 |
| 5. | Վերաբերական | 2 | | 2 | | 6 |
| 6. | Ձայնարկություն | 2 | | 2 | | 6 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 30 | | 24 | | 66 |

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն | 1960 թ. |
| 2. | Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն | 1983 թ. |
| 3. | Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու 2-րդ հտ. | 1974 թ. |
| 4. | Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները | 1974 թ. |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |

| | | |
|---|---|---|
| 1 | Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը | 1953 թ. |
| 2 | Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում | 1962 թ. |
| 3 | Աբբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն | 1976 թ. |
| 4 | Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում | 1960 թ. |
| 5 | Աբրահամյան Ս., Արդի հայերենի դերանունները | 1956 թ. |
| 6 | Աղայան Էդ. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը | 1967 թ. |
| 7 | Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում | 1959 թ. |
| 8 | Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն | 1952 թ. |
| 9 | Բարսեղյան Հ., Մ. Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները | 1976 թ. |
| 10 | Գարեգինյան Գ. Շաղկապները ժամանակակից հայերենում | 1963 թ. |
| 11 | Գյուլբուդաղյան Ս. Թվական անունը ժամանակակից հայերենում | 1964 թ. |
| 12 | Իշխանյան Ռ., Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը | 1974 թ. |
| 13 | Հարությունյան Հ., Ածական անուն, դերանուն | 1976 թ. |
| 14 | Մարգարյան Ա., Արդի հայերենի կապերը | 1955 թ. |
| 15 | Մարգարյան Ա., Արդի հայերենի հարադիր բայերը | 1966 թ. |
| 16 | Պառնասյան Ն., Քերականական համանունները ժամանակակից հայերենում | 1979 թ. |
| 17 | Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց | 1955 թ. |
| 18 | Գյուրջինյան Դ., Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում | 2005 թ. |
| 19 | Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Ձևաբանություն | 2008 թ. |
| **Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)** | | |
| 1. | www.nayiri.com | |
| 2. | www.haygirk.nla.am | |

**12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ**

**12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ**

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն |
|---|---|---|---|---|
| 1. | Բայ | Բայի որպես խոսքի մաս: Կազմությունը: Բայահիմքեր: Բայասեռի քերականական կարգ: Դերբայներ: Եղանակ: Ժամանակ: Դեմք: Թիվ: Կերպ: Անկանոնություն: Պակասավորություն: Հարադիր բայեր: Խոնարհման կաղապարներ: | 14 | ՊԳ 2,3,<br>ԼԳ 1,2,6,7,8,12,15,17,19 |
| 2. | Մակբայ | Մակբայը որպես խոսքի մաս: Կազմությունը: Իմաստային դասակարգումը: | 4 | ՊԳ 1,2,3<br>ԼԳ 4,17,16,19 |
| 3. | Կապ | Կապը որպես խոսքի մաս: Նախադրություններ: Ետադրություններ: Երկդրություններ: Իսկական և անիսկական կապեր: Կապերի հոլովառությունը: Կապերի իմաստային դասակարգումը: | 4 | ՊԳ 2,3,4. ԼԳ 4,17,16,19 |
| 4. | Շաղկապ | Շաղկապը որպես խոսքի մաս: Համադասական և ստորադասական շաղկապներ: | 4 | ՊԳ1,2,3,4. ԼԳ 4,10,16,19 |
| 5. | Վերաբերական | Վերաբերականը որպես խոսքի մաս: Տեսակները: | 2 | ՊԳ 1, 2,3,4. ԼԳ 4,16,19. |
| 6. | Ձայնարկություն | Ձայնարկությունը որպես խոսքի մաս: Տեսակները: | 2 | ՊԳ1,2,3,4 ԼԳ 4,16,19. |

### 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | Բայ | Բայի որպես խոսքի մաս: Կազմությունը: Բայահիմքեր: Բայասեռի քերականական կարգ: Դերբայներ: Եղանակ: Ժամանակ: Դեմք: Թիվ: Կերպ: Անկանոնություն: Պակասավորություն: Հարադիր բայեր: Խոնարհման կաղապարներ: | 12 | Հարց ու պատասխան: Տեսական գրականության քննարկում: Նախադասության ձևաբանական վերլուծություն: | ՊԳ 2,3, ԼԳ 1,2,6,7,8,12,15,17,19 |
| 2. | Մակբայ | Մակբայը որպես խոսքի մաս: Կազմությունը: Իմաստային դասակարգումը: | 2 | Հարց ու պատասխան: | ՊԳ 1,2,3 ԼԳ 4,17,16,19 |
| 3. | Կապ | Կապը որպես խոսքի մաս: Նախադրություններ: Ետադրություններ: Երկդրություններ: Իսկական և անիսկական կապեր: Կապերի հոլովառությունը: Կապերի իմաստային դասակարգումը: | 4 | Տեսական գրականության քննարկում: | ՊԳ 2,3,4. ԼԳ 4,17,16,19 |
| 4. | Շաղկապ | Շաղկապը որպես խոսքի մաս: Համադասական | 2 | Նախադասության ձևաբանական | ՊԳ1,2,3,4. ԼԳ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | և ստորադասական շաղկապներ: | | վերլուծություն: | 4,10,16,19 |
| 5. | Վերաբերական | Վերաբերականը որպես խոսքի մաս: Տեսակները: | 2 | Հարց ու պատասխան: | ՊԳ 1, 2,3,4. ԼԳ 4,16,19. |
| 6. | Ձայնարկություն | Ձայնարկությունը որպես խոսքի մաս: Տեսակները: | 2 | Տեսական գրականության քննարկում: | ՊԳ1,2,3,4 ԼԳ 4,16,19 |

### 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բայասեռի քերականական կարգ: Կերպ: Հարադիր բայեր: Խոնարհման կաղապարներ: | Բայի խոնարհման մասնակաղապարները: Կերպի քերականական կարգի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ: Սեռի քերականական կարգի ըմբռնումը: Կրկնաբաղադրաժամանակաձևեր: | Լսարանային | Թեմայի ուսուցման ընթացքում | Ըստ սահմանված չափանիշների /14.3 կետ/ | ՊԳ 1,2,3,4<br>ԼԳ 2,3,8,12 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Մակբայը որպես խոսքի մաս: Կազմությունը: Իմաստային դասակարգումը: | Մակբայի կազմությունը: | Տնային | Թեմայի ուսուցման ընթացքում | Ըստ սահմնված չափանիշների /14.3 կետ/ | ՊԳ 1,2,3<br>ԼԳ 4,17,16,19 |
| 3. | Կապը որպես խոսքի մաս: Նախադրություններ: Ետադրություններ: Երկդրություններ: Իսկական և անիսկական կապեր: Կապերի հոլովառությունը: Կապերի իմաստային դասակարգումը: | Կապերի կազմությունը: | Տնային | | | ՊԳ 2,3,4. ԼԳ 4,17,16,19 |
| 4. | Շաղկապը որպես խոսքի մաս: Համադասական և ստորադասական շաղկապներ: | Շաղկապների կազմությունը: | Տնային | | | ՊԳ1,2,3,4. ԼԳ 4,10,16,19 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Վերաբերականը որպես խոսքի մաս: Տեսակները: | Վերաբարականների կազմությունը: | Տնային | | | ՊԳ 1, 2,3,4. ԼԳ 4,16,19. |
| 6. | Ձայնարկությունը որպես խոսքի մաս: Տեսակները: | Ձայնարկությունների կազմությունը: | Տնային | | | ՊԳ1,2,3,4 ԼԳ 4,16,19 |
| 7. | | | | | | |

**13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում**

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (լուսավոր, օդափոխվող և ջեռուցվող) | Գրատախտակ, կավիճ, բարձիկ, մարկեր: |

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

### 14.3. Ստուգման չափանիշներ:

**Գործնական աշխատանքների ընթացքում /4 ստուգում/ և ընթացիկ**

քննությունների ժամանակ /2 քննություն/ սահմանվում են հետևյալ չափանիշները:

**Գործնական աշխատանքի ստուգում /4 ստուգում/**

1. Տեսական գիտելիքը՝ 2 միավոր
2. Գործնական հմտություններ՝ 8 միավոր:

**Քննությունների ստուգում (2 քննություն /գրավոր կամ բանավոր/)**

- **Անցկացման ձևը՝ բանավոր**

1. Տեսական գիտելիք՝ 15 ( 3 հարց ամեն քննության ժամանակ):
2. Գործնական հմտություններ՝ 5 միավոր (1 հարց ամեն քննության ժամանակ):

- **Անցկացման ձևը՝ գրավոր**

3. Տեսական գիտելիք՝ 5 ( 1 հարց ամեն քննության ժամանակ):
4. Գործնական հմտություններ՝ 15 միավոր (3 հարց ամեն քննության ժամանակ):

ՀԱՐՑԱՇԱՐ/ թեստի նմուշ / տոմսի նմուշ

**Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն**
***(ընթացիկ ստուգումների հարցաշար)***

1. Բայն իբրև խոսքի մաս:
2. Բայի իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական և բառակազմական առանձնահատկությունները:
3. Բայի անդեմ (դերբայական) և դիմավոր (եղանակային) ձևերը:
4. Բայի կազմությունը: Բայածանցներ:
5. Բայահիմքեր. տեսակները:
6. 
7. Բայասեռի քերականական կարգը: Բայասեռի արտահայտման ձևաբանական միջոցները:
8. Սեռային փոխանցումներ:Կրկնասեռ բայեր:
9. Ներգործական, կրավորական և չեզոք բայեր:
10. Կրավորական բայերի կազմումը անցողական բայերից:
11. Կրավորական բայերի արտահայտած տարբեր իմաստները (բուն կրավորական,չեզոք, անդրադարձ, փոխադարձ):
12. Պատճառականների կազմումը ածացմամբ և *տալ* բայի հարդրմամբ:

13. Դերբայների դասակարգումը ըստ գործածության (անկախ և կախյալ)։
14. Անկախ (բուն) դերբայների կազմությունը և շարահյուսական առանձնահատկութունները։
15. Կախյալ (ձևակազմիչ) դերբայների կազմությունը և շարահյուսական առանձնահատկությունները։
16. Բայի դիմավոր ձևերը և նրանց քերականական հատկանիշները։
17. Դեմքի ու թվի քերականական կարգերը և նրանց արտահայտության միջոցները։
18. Եղանակի քերականական կարգը։ Սահմանական, հրամայական, ըղձական, հարկադրական, ենթադրական եղանակները, նրանց կազմությունը։
19. Ժամանակի քերականական կարգը։ Տրամաբանական և քերականական ժամանակների փոխհարաբերությունը։
20. Պարզ (համադրական) և բաղադրյալ (վերլուծական) ժամանակաձևեր։
21. Երկրորդական վերլուծական (կրկնաբաղադրյալ) ժամանակաձևեր, դրանց կազմության և կիրառական առանձնահատկությունները։
22. Կերպի քերականական կարգը։
23. Սահմանական եղանակի ժամանակաձևերը։ Ներկայի հետ հարաբերվող ժամանակաձևեր՝ ներկա, անցյալ, ապառնի։
24. Անցյալի հետ հարաբերվող ժամանակաձրեր։
25. Ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակաձևերը, կազմությունը, արտահայտած իմաստները։
26. Հրամայական եղանակի կազմությունը, արտահայտած իմաստները։
27. Հայերենի բայի խոնարհման 2 տիպերը (Ե և Ա)։ Սրանց խոնարհման մանրակաղապարները։
28. Անկանոն բայեր։ Անկանոնության դրսևորումները սահմանական ներկայում և անցյալ անկատարում, անցյալ կատարյալում և հրամայական եղանակում։
29. Պակասավոր բայեր։ Դրանց խոնարհման առանձնահատկությունները։
30. Ժխտական խոնարհում։ Համադրական և վերլուծական ժամանակաձևերի փոխհարաբերությունը դրական և ժխտական խոնարհումների մեջ։
31. Ժխտականի կազմության համադրական ձևերը (սահմ. եղ. անց. կտ. և ըղձ. եղ.)
32. Ժխտականի կազմության վերլուծական ձևերը (սահմ. եղ. բաղադրյալ ժամանակաձևեր, ենթադրական եղանակ, հրամայական եղանակ)
33. Հարադիր բայերի խոնարհումը։
34. Մակբայն իբրև խոսքի մաս. նրա իմաստային, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները։
35. Մակբայի տեսակներն ըստ կազմության։
36. Մակբայի տեսակներն ըստ իմաստի. ժամանակի մակբայներ։
37. Տեղի մակբայներ։
38. Ձևի մակբայներ։

39. Չափի և ընդհանրական մակբայներ:
40. Կապը որպես խոսքի մաս:
41. Կապերի տեսակներն ըստ դիրքի:
42. Կապերի տեսակներն ըստ կազմավորման աստիճանի:
43. Կապերի իմաստային խմբավորումները. տարածական կապեր:
44. Ժամանակային կապեր:
45. Վերաբերության և նպատակի կապեր:
46. Պատճառի և ձևի կապեր:
47. Հիմունքի և զիջման կապեր:
48. Բացառման և բացահայտման կապեր:
49. Ներգործման և չափի կապեր:
50. Կապվող բառերի հոլովական կիրառությունները:
51. Շաղկապը որպես խոսքի մաս:
52. Շաղկապների տեսակներն ըստ կիրառության:
53. Շաղկապների տեսակներն ըստ կազմության:
54. Շաղկապների տեսակներն ըստ իմաստի:
55. Համադասական շաղկապներ. միավորիչ, ներհակական,տրոհական:
56. Ստորադասական շաղկապների իմաստային խմբերը. մեկնական և ժամանակի շաղկապներ:
57. Պայմանի և նպատակի շաղկապներ:
58. Պատճառի և հիմունքի շաղկապներ:
59. Զիջական և համեմատության շաղկապներ:
60. Մակաբերական և բացահայտման շաղկապներ:
61. Ձայնարկությունն իբրև խոսքի մաս. տեսակները և իմաստային նշանակությունները:
62. Վերաբերականն իբրև խոսքի մաս. տեսակներն ըստ կազմության:
63. Վերաբերականների տեսակներն ըստ իմաստի. հաստատական, ժխտական և բաղձանքի վերաբերականներ:
64. Ցուցական, երկբայական վերաբերականներ:
65. Սաստկական, սահմանափակման վերաբերականներ:
66. Կամային, զիջական վերաբերականներ:

Ինքնուրույն աշխատանքի ստուգում

1. Տեսական գրականության ուսումնասիրություն:
2. Տեսակետները համադրելու և վերլուծելու կարողություն:
3. Եզրակացություններ և սեփական տեսակետը արտահայտելու կարողություն:

**14.4. Գնահատման չափանիշները.**

- Տեսական գիտելիքների կիրառությունը գործնական աշխատանքի ընթացքում:
- Գործնական աշխատանքները՝ համաձայն ստուգման չափանիշի /14.3 կետ/:
- Ինքնուրույն աշխատանքը՝ համաձայն ստուգման չափանիշի /14.3 կետ/:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն

**Կրթական ծրագիր՝** 011401.19.6 Հայոց լեզու և գրականություն

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՀԼԳ/բ-010 «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-2)»</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">4 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">3-րդ տարի, 5-ին կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="4">Ժամերի բաշխումը</td><td rowspan="2">Լսարանային</td><td rowspan="2">54</td><td>Դասախոսություն</td><td>30</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>24</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">66</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">120</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Ընթացիկ քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը, խնդիրները</td><td colspan="4">Դասընթացի նպատակն է մասնագիտական հիմնարար գիտելիքների մատուցումը, ապագա ուսուցչին ձևաբանությանը վերաբերող տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով զինելը:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է.<br>Հասկանա՝<br>• Խոսքի մասերի տարբերությունները, ինչպես նաև խոսքի մասերի և նախադասության անդամների տարբերությունները:<br>Իմանա՝<br>Խոսքի մասերի դասակարգման տեսությունները և հիմունքները: Խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները:<br>Կարողանա՝<br>Կատարել տեքստի ձևաբանական վերլուծություն, գտնել զուգաձևությունները, անկանոնությունները, սխալներն ու շեղումները:<br>Տիրապետի՝<br>Ձևաբանական վերլուծության մեթոդներին:<br>Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ կոմպետենցիաները.<br>ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | **ՄԶԿ1** քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,<br>**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,<br>**<u>ԱԿ4</u>** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,<br>**<u>ԱԿ6</u>** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,<br>**ՈՒԿ4** առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն |
| Դասընթացի բովանդակությունը | Թեմա 1. Բայ:<br>Թեմա 2. Մակբայ:<br>Թեմա 3. Կապ:<br>Թեմա 4. Շաղկապ:<br>Թեմա 5. Վերաբերական:<br>Թեմա 6. Ձայնարկություն: |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | • Տեսական գիտելիքների կիրառությունը գործնական աշխատանքի ընթացքում:<br>• Տեսակետները համադրելու և վերլուծելու կարողություն:<br>• Եզրակացություններ և սեփական տեսակետը արտահայտելու կարողություն: |
| Գրականություն | ՊԱՐՏԱԴԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ<br>**1.** Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն<br>**2.** Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն<br>**3.** Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու 2-րդ հտ.<br>**4.** Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները<br>ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ<br>1. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը<br>2. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում<br>3. Արբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի |

| | |
|---|---|
| | քերականություն<br><br>4. Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում<br><br>5. Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը<br><br>6. Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում<br><br>7. Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն<br><br>8. Գարեգինյան Գ. Շաղկապները ժամանակակից հայերենում<br><br>9. Իշխանյան Ռ., Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը<br><br>10. Մարգարյան Ա., Արդի հայերենի կապերը<br><br>11. Մարգարյան Ա., Արդի հայերենի հարադիր բայերը<br><br>12. Պառնասյան Ն., Քերականական համանունները ժամանակակից հայերենում<br><br>13. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց<br><br>14. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Ձևաբանություն |